

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

20.03.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Ադիլյանը, Վ. Դոխոյանը, Ս. Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա. Մանուկյան - մարզպետի խորհրդական

Օրակարգում՝

1. ՀՀ վարչապետի Լոռու մարզ կատարած այցի մասին
/ Ա. Նալբանդյան/
2. ա) Նախորդ շաբաթվա ընթացքում տրված հանձնարարականների և կատարված աշխատանքների մասին
բ) ՀՀ համապետական ընտրությունների կազմակերպչական աշխատանքների կատարման ընթացքի մասին
/Ջեյ. Ն. Սարգսյան/
3. «Սմարթ» դասարանների կազմակերպման գործընթացի մասին
/Ջեյ. Լ. Ասլանյան/
4. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ջեյ. Հ. Պապոյան/
5. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
/Ջեյ. Գ. Հակոբյան/
6. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Հ. Թադևոսյանին, Տ. Բադոյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել համայնքների կողմից սեփական եկամուտների (հիմնականում հողի հարկի գծով) հավաքագրման եռամսյակային պլանային ցուցանիշներն ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

2-օրյա ժամկետում ուսումնասիրել, ամփոփել և ներկայացնել տեղեկատվություն ՀՀ վարչապետի կողմից համայնքներում անցկացրած հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համապետական ընտրությունների անցկացման կազմակերպական աշխատանքների իրականացման նկատմամբ:

4. ՀՀ մարզպետի խորհրդական Լ. Ասլանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

3-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ մարզի «Սմարթ» դպրոցների ինֆորմատիկայի դասավանդման և մասնագետների վերապատրաստման վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Անհրաժեշտ ուսումնասիրություն կատարել Վարդաբլուր համայնքում աշնանացան ցորենի ցանքատարածությունների ցրտահարության պատճառների վերաբերյալ և ներկայացնել տեղեկատվություն:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին համայնքների աղբավայրերի գույքագրմանը և դրանց վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանն աջակցելու գործընթացի կազմակերպմանը:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/